



ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԴՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐ-
ԺԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՈՒՅԻՒՄ. ԻԹ. ՏԱՐԻ. ՀԱՄԱՐ ԵՐԿՈՇԱՍՏԱՆԵՐՈՐԴ. ԴԵԿՏԵՄԲԵՐ 1895 թ.

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՏԱՐՈՒԱՅ ՎԵՐՋԻՆ:

«Նկայք առ իս ամենայն վաստակեալք
ևս քեռնաւորք, եւ նս հանգուցից զձեզ»:
Մատթ. ԺԱ. 29:

Գիտէք արդեօք, ի՞նչ սրտով է վերադառ-
նում երկրագործը կարկտահար դաշտից,
ուրողջ տարուայ աշխատանքը գետնին է
հաւասարուել, մի տուն ընտանիք ապրուստից
զրկուել. զբացել էք այն վիշտը, որ ունենում
է անտէր, անօգնական մի այլի կին մանրիկ
որրի հետ ամուսնու թարմ գերեզմանի վե-
րախուս: Հա՞ծ . . . Մեցել էք երբէք մի քա-
ղաքով, ուր գեռ քանի օր առաջ սարսափելի

համաճարակն էր իշխում կամ հանգիպել էք
յաղթուած ու ջարդուած մի բանակի պա-
տերազմից դարձող մնացորդներին . . . Ի՞նչ է
սակայն այդ ամէնը այն աղիոգորմ տեսա-
րանի առաջ, որ հարստահարեալ հայ ժողո-
վուրդն է ներկայացնում այսօր տարուայ
վերջին՝ քարասիրտ դատաւորների և անգութ
ձմրան ձիրաններում: Չարաբանդ տարի, ար-
դահատելի ժողովուրդ . . . :

Ուրախ զգացումներով չինքեցինք մենք
նաեւ անցեալ թուականը. Սասունն էր ամ-
բողջ սրի ու կրակի աւար եղել, Հայոց աշ-
խարհի ոյժ և պարծանք մի սերունդ թաւալ-
զոր ընկել բայց նա ընկել էր հերոսական

պանծալի մահով՝ իւր տունն ու տեղի իւր հայրենի արբուծիւնները պաշտպանելիս և մեզ աւելի սիրտ առնել ու հոգուով արիանալ արժան էր քան սրտմաշուկ հառաչանքներ արձակել։ Հինաւուրց կաղնու մի հզօր բազուկն էր միայն ջախջախուած և իսկ բունը դեռ կենդանի էր և մենք յոյս ունէինք, թէ անմեղ զոհերի մինչև երկինք բողբոջող արիւնքը մի արդար դատաստանի առաջ կենէ։ Թաւապեալ ժողովրդի փրկութեան միջնորդ կը հանդիսանայ և վերակենդանութեան մի սաղմ կը առնայ։ Սակայն աւաղ, ինչ զարհուրելի յուսախաբութիւն, նորանոր տառապանք և կոտորածներ միայն աճեցան այդ սաղմից, և այսօր նոյն ինքն Հայ ժողովուրդն է դժոխային մեքենայութիւնների զոհ եղած, հազար հազար վերքերով խոցոտուած, իրրեւ մի աւարդ ձձի տրորուած ընկած մեր առաջ։ Մի անագորոյն գազան ասես յարձակուեցաւ, կրծքից կորզեց՝ հանեց նորա կենդանութեան բոլոր գործարանները և նա ընկաւ անփառունակ ... առանց ընդդիմութեան, առանց պաշտպանի, առանց բողբոջման իսկ իրաւունքի ...

Անցնին օրերը և կարկտահար դաշտը կրկին կկանաչի, սգաւօր կինը իւր որբերին հասակ առած կտեսնէ և կմխիթարուի, համաճարակի ու պարտութեան բացած վերքերն էլ կը թշուռին, քանի երկրի մէջ զօրեղ մի տարր է ապրում, կենսունակ ոյժ սնուցանում, բայց ժողովուրդը բարոյական ու նիւթական զօրութիւնից պատուից ու գոյքից զրկուած արիւնաքամ ժողովուրդը ... Ի՞նչ կլինի եթէ նա վերջնականապէս ընկձի անընդհատ հարուածների տակ, այս մահամերձ հիւանդութիւնից կրկին կազդուրուել և ոտքի կանգնել չկարողանայ ... Պատմական, վսեմ, գաղափարական կապերով իրար հետ կապուած մարդոց մի համայնք է դա, որի անդամներից իւրաքանչիւրը նորան է պարտական իւր ունեցած դիրքն աշխարհի մէջ, իւր մարդկային բոլոր արժանիքն ու առանձնայատկութիւնները և երբ մեռնէ նորան պիտ աւանդէ կեանքի

կռուում իւր ձեռք բերած արդիւնքն ու թերի թողած գաղափարների իրագործումը։ Այսպիսի մի հիւանդի հոգեւարքին ահա ականատես լինել և զգալ, որ նորա արեան հետ քո իսկ արիւնն է կաթիլ կաթիլ ծորում, որ վերջին շնչի հետ մէկտեղ՝ դու ևս պիտ մեռնիս աշխարհիս վերայ, քո բոլոր բարձր ձգտումներով, քո բոլոր սուրբ գաղափարներով ... Ողորմելի է արդարեւ այն Հայը, որին այսպիսի մի զգացում մինչև ուղեղի խորքը չէ ցնցում, բայց բիւրապատիկ աւելի ողորմելի այն քրիստոնեայն, որ այդ զգացման ներքոյ ծնշուած իսկ լսել չէ կարող աշխարհի Փրկչի մեղմաձայն հրաւերը, տարուայ այս վերջին օրերին բոլոր մարդկութեան՝ բայց յատկապէս բոլոր նեղեալների, արհամարհեալների, վհատեալների համար խորհրդաւոր մի հրաւեր։ «Յկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ»։

Մենք շատ դռներ բաղխեցինք՝ հանգիստ, ապաստան որոնելով, մի բաժակ ջուր յանուն Քրիստոսի, աղբրեցինք, մեր վիրաւոր եղբայրների այրուած շրթուները զովացնելու, և կորագլուխ ու յուսախաբ դարձանք ամենուստեք. մարդասէր Եւրոպայից զթութիւն հայցողներին, քաղաքագիտութեան նաւի վերայ ապաւինողներին, յետ միեզին կրկին իրենց դահիճների զիրկը, անդարբերութեամբ դիտեցին, թէ ինչպէս են խեղդուում նոքա արեան ու արտասուաց ալիւնքների մէջ. քաղաքակրթուած քրիստոնէութիւնն, ասացին, մի լուծայ անդամ չունի նահատակ եկեղեցւոյ դանձանակի մէջ զնելու։ Եւ այժմ, երբ այդ եկեղեցին երբեք աւ փաստակեար թալիացած ընկած խաչի բեռան տակ՝ նայում է Վողդրթայի վերայից դէպի յետ, դէպի իւր կեանքի այս աղետալի շրջանը, դէպի խաչահանուաց բազմութիւնը՝ յուսահատութեան ու ատելութեան զգացումն է միթէ համակում նորան. քա՛ն ... «Ետուած Երրահամու, Ետուած Խահակայ և Յակոբայ, Ետուած հարցըն մերոց փառաւորեաց զԱրդի իւր զՅիսուս, զոր դուքն մատնեցէք, և խնդրեցէք, այր մի մահապարտ շնորհել ձեզ ... արդ ապաշաւե-

ցէք և դարձարուք ի ջնջել զմեզս ձեր, որպէս զի եկեցցեն ժամանակք հանգստեան յերևաց Տեառն, ահա առաքելական եկեղեցւոյ թողութեան վճիռն ու յուսատու զաղափարը:

Հարկաւ եթէ մենք Քրիստոսի ենք վերադրում այն ամէնք, ինչ որ Նորա անունը կրող աշխարհը գործում է, և պատրաստ ենք երես թեքելու Նորանից, երբ այդ աշխարհը չէ տալիս մեր ցանկացած հանգիստն ու փառաւորութիւնը՝ աւաղելի ենք քան զբազումս, արհամարհանաց ու կործանման արժանի. սուտ էր, կնշանակէ, մեր պարծանքն ու երգումը Քրիստոսի անունով, անհիմն մեր գիտումը քրիստոնեայ եղբայրներին: Փրկչի մխիթարութիւնն այդպիսիների համար չէ: Արբ նա իւր քաղցր լուծն ու փորձողի ընդ աշխարհի վերայ դրաւ հրաւիրելով Իրենից հեղութիւն ու խոնարհութիւն սովորել՝ գիտէր, որ այդ խոնարհութիւնը մինչև խաչ ու մինչև մահ տանել կարող է. գիտէր, որ այդպիսի խոնարհութեամբ միայն կրկին բարձրանալ, փառք ու հանգիստ ժառանգել կարելի է: Եւ այդ երկնաւոր գիտութեամբն է, որ անցեալ արիւնալից տարուայ փորձը մեզ համար հասկանալի և խրատական է դառնում. այդ յաւիտենական ճշմարտութիւնն է դարձեալ, որ քարոզելով երկնքից երկիր է իջնում Եստուծոյ Միածին Որդին և մի նոր տարեշրջան սկսում. իջնում է նա աղքատութեան և խոնարհութեան մտւորը և սովորեցնում թշուառութեան ու հալածանքի մէջ անկումն չտեսնել, դուրսն՝ աշխարհի մեծերի մօտ հանգիստ ու փառք չորոնել, այլ զօրանալ ի ներքուստ, զարգանալ հոգւով և իմաստութեամբ, աստուածային շնորհացն ապաւինել ու հաւատալ, որ այդ շնորհաց լուսով առկայծող պատրոյզն երբէք չի շիջանի և ոչ այդ շնորհօք հաստատուն եղէ՞ղը կրեկանի: Աս հրաւիրում է բոլորին, որոնք իրենց հաշիւը հնի հետ տեսնել և նոր կեանք սկսել պատրաստ են: Առէք զլուծ իմ և ուսարուք յինէն՝ զի հեղ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց...:

Կ. Վ.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

• Խրաքանչիւր որ ի ծննդ աւէ. ես Պաւղոսեան եմ, եւ միան՝ եթէ ես ապաւղոսեան, եւ միան՝ եթէ ես Կեփայեան, եւ միան՝ եթէ ես քրիստոսեան: Ա. Կորնթ. 1, 12.

Կուսակցութիւն ասածդ ես տանել չեմ կարող, և ասեմ ինչու. Լիտորէի բառարանի մէջ կուսակցութիւն կոչուում է «որոշ թուով անձանց խմբակցութիւնը»։ — — — — — որոնք ուրիշ շահ և տարբեր կարծիքներ ունին»։ Աւելի բացատրութիւն պէտք չէ. ընդգծուած խօսքերը բաւական են:

Համախմբուիլ աշխարհի մէջ մի պտղաբեր գաղափար տարածելու, կեանքի անհարթութիւնները վերացնելու և թշուառներին օգնութիւն հասցնելու համար — այդ ես հասկանում եմ Ուղիղ է, որ դա առանց կռուի չի անցնի. Կեքը Փրկչին այդ լաւ գիտէր և տեղի չտուաւ. իրագործելով ինչ որ մարգարէութեանց մէջ ծրագրած էր, չթուլանալով և ոչ մի քայլ չը շեղուելով ճանապարհից՝ մինչև որ արդարութիւնը հաստատուի աշխարհիս վերայ:

Միանալ մի գործի հետ, որին ծառայել ես կամենում մարդոց հետ, որոնց ուղղել և ազատել պէտք է, և ամեն վիշտ յանձն առնելով կռուի մէջ մտնել, որ յաջողութեան անհրաժեշտ պայմանն է՝ բարի է այդ և գեղեցիկ, Ուրիշ է սակայն, և ոչ գեղեցիկ, անձնաւորութիւնների դէմ, քրիստոնեայ եղբայրների դէմ միանալ:

Կուսակցութիւններ ես չեմ սիրում այլ և նորա համար, որ նոքա գրեթէ միշտ կուսակցական ոգի են սնուցանում: Իսկ ուր կուսակցական ոգի կայ, այնտեղ հալածուած է և սերը և արդարութիւնը: Սէրը՝ այդ պարզ է. Արդեօք անցնում է բոպէ, որ մենք մեր վէճերի մէջ նորա սրբութիւնը չարատաւորենք ծաղրական, վիրաւորական խօսքերով, մեղադրանքներով, աննպաստ կարծիքներով, նուաստացուցիչ քննադատութեամբ, Բայց աւելի լաւ է չբխօսենք այդ մասին. Այնպիսի վէրքեր են դոքա, որոնց մասին խօսել չէ կարելի առանց լեզուի մէջ դառնութիւն խառնելու, ասել է թէ աւելի մեծացնելու այն չարիքները, որոնց դէմ բողոքել ենք կամենում:

Այո՛, արդարութիւնն էլ զրկանքներ է կրում կուսակցական ոգուց. Առնենք մի մարդ, որ եռանդուն և վճռական կերպով կարծիք է յայտնել վիճելի խնդիրների մասին: Միայն նորա մտքերը չեն իրարից խիստ տարբեր քննադատութեանց ենթարկուում՝ այդ քնական կը լինէր, այլ նաև նորա միտումները, որտեղ արդէն շատ հեշտ է արդարութեան: